

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

**«Երևան ՋԷԿ» ՓԲԸ ՀՇԳՑ Էներգաբլոկի բնական գազի նոր գտման հանգույցի կառուցման
նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատրաստում**

№	Հիմնական տվյալների և պահանջների ցանկը	Նկարագիրը
1,	Օբյեկտի համառոտ նկարագրություն (փաստացի վիճակ) , տեղակայման վայրը	<p>Երևան ՋԷԿ» ՓԲԸ ՀՇԳՑ թիվ 1 Էներգաբլոկը շահագործման է հանձնվել 2010թ. Գազի ծախսաչափային հանգույցը, որի մեջ մտնում է նաև գազի գոխչը իրականացված է ASME CL.150 դասի A106 GrB մետաղե DN 350մմ տրամաչափի խողովակաշարով՝ տեղակայված է անմիջապես գազի կոմպրեսորների հարևանությամբ: Բոլոր սարքավորումների (Փական, ծախսաչափ, գոխչ, պտտվող խցափակիչ) միացումները կատարված են կցաշուրթային եղանակով: Հանգույցում տեղակայված է 1 գոխչ որի տեխնիկական պարամետրերը ներկայացված է կից ֆայլում (տես Strainer PDF)</p> <p>Հասցե՝ ք.Երևան, Արցախի 4 –րդ նրբանցք, թիվ 14</p>
2.	Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը	<ul style="list-style-type: none"> ▪ Նախագծել P15 բար ճնշման, 50000 մ³/ժամ թողունակությամբ գազի գտման հանգույց: ▪ Հանգույցի մուտքի և ելքի խողովակաշարերը պետք է միանան գործող հանգույցի ֆիլտրի մուտքի և ելքի գծերին (ցանկալի է միացնել նույն կցաշուրթային միացումներին) ▪ Նոր գտման հանգույցը նախագծել այնպես, որ այն տեղակայվի գործող ծախսաչափային հանգույցի հարևանությամբ գտնվող խոտածածկ տարածքում (տես Havelvacner): ▪ Կատարել մանրամասն ուսումնասիրություն և հաշվարկների միջոցով ընտրել առավել նպաստավորը առաջարկվող երկու տարբերակներից: <ol style="list-style-type: none"> 1. Երկու գոխչ, յուրաքանչյուրը 100% թողունակությամբ: 2. Երեք գոխչ, յուրաքանչյուրը 60% թողունակությամբ: <p style="margin-left: 40px;">Ֆիլտրերի ընտրության ժամանակ նախագծային ճնշումը ընդունել 15 բար, սակայն թողունակության հաշվարկները կատարել 10 բար ճնշման համար, որպեսզի աշխատանքային ռեժիմում վերջինս բավարարի հաշվարկային թողունակությունը:</p> <p style="margin-left: 40px;">Հաշվարկների մանրամասն հաշվետվությունը ներկայացնել պատվիրատուի հաստատմամբ:</p> ▪ Նոր գտման հանգույցում բոլոր ֆիլտրերից առաջ և հետո նախատեսել փականներ /տեսակները և տեխնիկական պարամետրերը պետք է լինի գործող սարքավորումների և ստանդարտների համաձայն, և համաձայնեցվի պատվիրատուի հետ : ▪ Խողովակաշարերի մոնտաժը նախատեսել արգոնի միջավայրում էլեկտրաեռակցման եղանակով: Սարքավորումների միացումները նախատեսել

№	Հիմնական տվյալների և պահանջների ցանկը	Նկարագիրը
		<p>կցաշուրթային միացման եղանակով, /տեսակները և տեխնիկական պարամետրերը պետք է լինի գործող սարքավորումների և ստանդարտների համաձայն, և համաձայնեցվի պատվիրատուի հետ:</p> <ul style="list-style-type: none"> ▪ Ձտիչների, փականների շահագործման և սպասարկման համար նախատեսել հարթակներ: ▪ Ձտիչները ընտրել փոխվող քարտիչներով տիպի (ANSI կարգը 15), որոնց զտման էլեմենտները պետք է ունենան 10-15 մկմ գազի մաքրության աստիճան: ▪ Ձտիչները պետք է կահավորված լինեն համապատասխան դրենաժային փականներով, տեղային դիֆերենցիալ մանոմետրերով: ▪ Ձտման հանգույցում նախատեսել դրենաժային և արտափչման խողովակներ համաձայն գործող նորմերի: ▪ Ձտման հանգույցի տեղակայման համար ուսումնասիրել գործող խողովակաշարի հենարանները, դրանց ընդարձակման ուղղությունները և կատարել մանրամասն հաշվարկ նախատեսելով նոր հիմնատակերը այնպես, որ գործող գազատարի վրա ցանկացած ուղղությամբ լարումները լինեն նորերի սահմանում: ▪ Կատարել գործող խողովակների, հիմքերի և նոր տարածքի տոպոգրաֆիկ հանույթ նորմերով նախատեսված մասշտաբի: ▪ Նոր տարածքի համար նախատեսել գործող հանգույցի ցանկապատի նմանատիպ էլեմենտներով նոր ցանկապատ, որի ներսում տարածքի հատակը պետք է կատարվի երկաթբետոնե սալով: <p style="text-align: center;">Կատարել՝</p> <p>Տեխնոլոգիական գծագրեր, շինարարական գծագրեր, աշխատանքի ծավալներ, օգտագործվող նյութերի մասնագրեր նշելով համապատասխան ԳՈՍՏ-երը կամ այլ ստանդարտները նախահաշվային փաստաթղթեր, տարածքի գեոդեզիական հանույթ:</p> <p>Աշխատանքների ծավալներում նախատեսել բոլոր եռակցման կարանների ռենտգենային հետազոտություն և պնևմատիկ փորձարկում նորմերի համաձայն:</p> <p>Բոլոր անհրաժեշտ գծագրերը, սխեմաները կտրամադրվի պատվիրատուի կողմից:</p>
3.	Նախագծային հիմնավորում և նորմատիվային պահանջներ, նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝ ելակետային տվյալներ	<p>Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր</p> <ul style="list-style-type: none"> - հողհատկացման հիմքեր (տրամադրում է պատվիրատուն) - ճարտարապետահատակագծային առաջադրանք (-ներ) և տեխնիկական պայմաններ, (տրամադրում է պատվիրատուն, նախագծողի կողմից տրամադրված էսքիզային նախագծի և այլ անհրաժեշտ տվյալների հիման վրա) - ինժեներաերկրաբանական հետազոտության եզրակացություն(-ներ), (տրամադրում է պատվիրատուն, անհրաժեշտության դեպքում նախագծողի կողմից կատարվում է լրացուցիչ) - նախագծային առաջադրանք - հանույթ, (տրամադրում է նախագծողը) - չափազորություններ, (կատարում է նախագծողը) - ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (շրջակա միջավայր, մշակույթ, արտակարգ իրավիճակներ): (ստանում է նախագծողը) <p>Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝</p> <ul style="list-style-type: none"> - <Քաղաքաշինության մասին> օրենք

№	Հիմնական տվյալների և պահանջների ցանկը	Նկարագիրը
		<ul style="list-style-type: none"> - <Քաղաքացիական պաշտպանության մասին> օրենք - <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> օրենք, և այլն
4	Նախագծման փուլերը	<p>Նախագծման նախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N 128-Ն հրամանի համաձայն</p> <p>Նախագծային աշխատանքների իրականացում</p> <p>«Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր» փուլերով (այդ թվում՝ Էսքիզային նախագիծ՝ ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումները պատվիրատուի և իրավասու մարմնի հետ նախապես համաձայնեցնելու նպատակով)</p>
5.	Նախագծի կազմը	<p>«Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր» փաթեթի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</p> <ol style="list-style-type: none"> 1. Ընդհանուր բացատրագիր 2. Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ (կամ հողամասի գլխավոր հատակագիծ) 3. Ճարտարապետաշինարարական մաս <ul style="list-style-type: none"> - Ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ <p>Կոնստրուկտիվ մաս</p> <ul style="list-style-type: none"> - Կոնստրուկտիվ լուծումներ, - կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն 4. Ինժեներական (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր) 5. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ 6. Շինարարության կազմակերպման նախագիծ 7. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ 8. Էներգախնայողությանը և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ: 9. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ) 10. Անձնագրային տվյալների ամփոփում (անձնագրի կազմում) <p>Համաձայնեցումներ</p> <p><i>Նախագծի համաձայնեցում</i></p> <ol style="list-style-type: none"> 1. Համայնքի ղեկավարի, 2. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (կամ ՀՀ ՆԳՆ) 3. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, 4. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, 5. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, 6. Ըստ անհրաժեշտության (համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի և տարածքի գլխավոր

№	Հիմնական տվյալների և պահանջների ցանկը	Նկարագիրը
		<p>հատակագծով սահմանված պահանջների, տեխնիկատնտեսական հիմնավորման, ինչպես նաև հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագրի առկայությամբ) ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ և այլն:</p>
6.	Այլ պահանջներ	<p>ա. պարզ կամ համալիր փորձաքննություն՝ ելնելով օբյեկտի բարդությունից, գործող նորմերի համաձայն;</p> <p>բ. շրջակա միջավայրի վրա ազդեցությունների փորձաքննության ապահովում (համաձայն ՀՀ օրենսդրության) ըստ անհրաժեշտության;</p> <p>գ. շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ;</p> <p>դ. մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը և դրա ողջ ընթացքում.</p> <ul style="list-style-type: none"> - տեղում ծանոթանալ և ուսումնասիրել օբյեկտի կոնստրուկտիվ կառուցվածքին; - անհրաժեշտության դեպքում շինարարության ընթացքում ցանկապատել տարածքը և յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում առաջացած շինարարական աղբը հավաքել պարկերի մեջ կապել և տեղափոխել կայանի տարածքից դուրս; - շինարարությունը ապահովել անհրաժեշտ մեխանիզմներով, տրանսպորտով, սարքավորումներով և գործիքներով; - ինժեներատեխնիկական և բանվորական անձնակազմին ապահովել մասնագիտական և աշխատանքային հագուստով, կոշիկներով, գլխադիրով (каска): Առանց արատահագուստի խստիվ արգելվում է մտնել կայանի տարածք; - նախքան աշխատանքները սկսելը կապալառուն պարտավոր է «Երևան ՋԷԿ» ՓԲԸ ղեկավարությանը պաշտոնական գրավոր ներկայացնել մեխանիզմների և տրանսպորտի քանակի, տեսակի, նշել պետհամարանիշները, ինժեներատեխնիկական և բանվորական անձնակազմի ցուցակները; - ինժեներատեխնիկական և բանվորական անձնակազմը պետք է պարտադիր անցնեն աշխատանքի և տեխնիկայի անվտանգության կանոնների և նորմերի պահպանման հրահանգավորման; - նախագծով նախատեսված օգտագործվող բոլոր շինարարական նյութերն ու տեխնոլոգիական սարքերը պետք է ունենան ապրանքի որակի հավաստագրեր; - շինարարության աշխատանքային ժամերը համաձայնեցնել «Երևան ՋԷԿ» ՓԲԸ տնօրինության հետ:

Աշխատանքների կատարման ժամկետը սահմանել 120 օրացույցային օր

ԿՏԱ-ի պետ

Բ. Ղազարյան

ՆՆԱԲ-ի պետ

Ա. Թագայան